

– Կոստանդին հազիւ թէ հօրն աթոռը բարձրացեալ՝ իւր ազահութեան ոգին յայտնի ըրաւ, ինչպէս տեսանք, հօր գերեզմանը կողոպտելով եւ մորուին համար պահեստի դրամը բռնի յափշտակելովէ իսկ Մարտինէ կայսրուհին, որ համբերութեան առաքինութիւնն չունէր՝ շուտ մը փոխարէն անելիով հատոյց. թունաւորեց զկայսրը եւ որդին Երակլեակ աթոռը նստեցնելով, Կոստանդին երկու որդիքը կրօնաւորաց վանք փակել տուաւ եւ նոցայ կողմնակիցքը հեռացուց պաշտօններէ:

Կոստանդին թագաւորութիւնը երեք ու կէս ամիս տեւեց. իսկ Մարտինէի որդուոյն թագաւորութիւնը ութն ամիս տեւելէն ետք՝ Ծերակոյտին վճռով եւ զինուորական յայտնի ապստամբութեամբ մը, որու գլուխ Վաղենտիանոս էր՝ վերջ առաւ: Մարտինէի լեզուն եւ Երակլեակի քիթը կը տրելէն վերջ՝ տերութեան հիւսիսային սահմանագլուխը աքսորեցին, եւ Կոստանդին անդրանիկը Կոստանդ կայսրը եղաւ եւ հօր անուամբ զինք Կոստանդին կոչեցին: Վաղենտիոս տերութեան ինսամածու եւ մեծ հազարապետ անուանեցաւ եւ Անկելինայ դարձեալ կը թագաւորէր: